ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (նախկին ՀՀ տարածքային կառավարման նախարարության գործունեության բնագավառի վերաբերյալ)

ԵՐԵՎԱՆ 2015

1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1.1 ՀՀ համայնքների տեղեկատվական բազայի ստեղծում

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կարևորությունը՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 54-Ա հրամանի համաձայն՝ ՀՀ մարզպետարանների միջոցով հավաքագրվել են համայնքների վերաբերյալ տեղեկատվությունները, ամփոփվել և նախարարության միջոցով մուտքագրվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից սպասարկվող Armdevinfo էլեկտրոնային ծրագիր: Իրականացված աշխատանքների արդյունքում յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ էլեկտրոնային բազան տեղադրվել է http://www.armdevinfo.am/ կայքում:

1.2 Տարածքային զարգացման հիմնադրամի նոր ռազմավարության մշակում

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետագա գործունեությունը բարեփոխելու նպատակով Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի աջակցությամբ մշակվել է նոր ռազմավարություն, որը, ըստ էության, տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման այլընտրանքային մոտեցումն է:

1.3 Փորձնական տարածքային զարգացման ծրագրերի իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ԵՄ-ի ֆինանսավորմամբ <<Աջակցություն տարածքային կառավարման նախարարությանը տարածքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում>> ծրագիրը, որը իրականացվում է ECORYS կազմակերպության կողմից ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ: Իրականացված աշխատանքների արդյունքում տարածքային կառավարման և զարգացման վարչության աշխատակիցների կարողությունները զարգացնելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ, ինչպես նաև մշակվել է տարածքային զարգացման նոր ռազմավարությունը:

1.4 Մարզային զարգացման ծրագրերի մշակում

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> N 38 արձանագրային որոշման պահանջների համաձայն՝ ՀՀ կառավարության հավանությանն են ներկայացվում յուրաքանչյուր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերը: Այս առումով հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման երկրորդ՝ 2015-2018 թվականների քառամյա ծրագրերը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության կողմից 11.12.14թ. ընդունվել են <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1459-Ն և <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2015-2018 թվական-ների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1458-Ն որոշումները:

1.5 Մարզային զարգացման ծրագրերի աշխատանքային պլանի կազմում և մոնիթորինգի իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի փետրվարի 26-ի թիվ 25-Ա հրամանով հաստատվել են մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերով նախատեսված 2014 թվականի իրականացվելիք տարեկան աշխատանքային պլանները: Տարեկան

աշխատանքային պլանի հիման վրա իրականացվել և նախարարության կայք-էջում հրապարակվել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կիսամյակային հաշվետվությունների մոնիթորինգը:

1.6 2014 թվականի իրականացված հրատապ ծրագրեր

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքներում մի շարք հրատապ խնդիրների լուծման նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով հատկացվել է ընդհանուր առմամբ 6 մլրդ դրամ գումար, որից՝ 5 մլրդ դրամ գումարը՝ պետական բյուջեի վերաբաշխման արդյունքում, իսկ 1 մլրդը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Նշված գումարը ուղղվել է հիմնականում դպրոցաշինությանը, ճանապարհաշինությանը և ավելի հրատապ լուծում պահանջող միջոցառումների իրականացմանը, մասնավորապես՝ ցրտահարությունից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցություն ցուցաբերելու նպատակով որոշ մարզպետարաններին (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Կոտայք, Սյունիք, Վայոց ձոր) տրամադրվել է 526,897.0 հազ դրամ, որն ուղղվել է տուժած գյուղացիական տնտեսությունների հող հարկի ամբողջությամբ (160,750.0 հազ դրամ) և ոռոգման ջրի վարձի 50%-ի (366,147.0 հազ. դրամ) փոխհատուցմանը: Հակակարկտային կայանների կառուցման համար ՀՀ Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերին հատկացվել է ընդհանուր 105 մլն դրամ, որից՝ ՀՀ Լոռու մարզին 40 մլն դրամ 10 հակակարկտային կայաններ կառուցելու համար, ՀՀ Կոտայքի մարզին՝ 45 մլն դրամ 10 կայանների համար և ՀՀ Շիրակի մարզին՝ 20 մլն դրամ 4 կայանների համար:

1.7 Գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքներ

Համայնքներում գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հերթական <<Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակաբաշխությունը:

Գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով լրամշակվել է ՀՀ վարչապետի կողմից սահմանված <<Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակաբաշխության հայեցակարգը:

1.8 Վարչական վերահսկողություն

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի տվյալ տարվա վարչական հսկողության իրականացման աշխատանքային ծրագրերը կազմելու նպատակով մարզպետարաններից հավաքագրվել է համայնքների ցանկ, որը համեմատվել է Վերահսկիչ պալատի և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության աշխատանքային ծրագրերով նախատեսված համայնքների ցանկի հետ՝ բացառելու համար նույն համայնքներում նույն բնագավառում իրականացվող հսկողությունների կրկնությունը: Նույն համայնքի նույն բնագավառում երկու տարի անընդմեջ հսկողության իրականացումը բացառելու նպատակով տվյալ տարվա աշխատանքային ծրագիրը համեմատվել է նաև նախորդ տարվա վարչական հսկողության աշխատանքային ծրագրի հետ, այնուհետև ծրագիրը ներկայացվել է տարածքային կառավարման նախարարի հաստատմանը: Անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով աշխատանքային ծրագրում իրականացվել են նաև փոփոխություններ:

Արդյունքում 2014 թվականին ՀՀ մարզերում վարչական հսկողություն է իրականացվել 232 համայնքներում:

Հսկողության արդյունքների հիման վրա կազմվել են եռամսյակային հաշվետվություններ, որոնք տեղադրվել են նախարարության ինտերնետային կայք-էջում:

Նախարարության կողմից հսկողություն է սահմանվել արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ մարզպետների կողմից իրականացված աշխատանքների նկատմամբ:

Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերվել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը:

1.9 Երևան քաղաքի ավագանու որոշումների և մարզպետների ընդունած գերատեսչական իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողության իրականացում

2014 թվականին իրավական հսկողություն է իրականացվել Երևան քաղաքի ավագանու թվով 232 որոշումների և մարզպետի թվով 2759 իրավական ակտերի նկատմամբ: Հսկողության արդյունքների հիման վրա արձանագրվել են իրավական տեխնիկայի պահանջների չկատարման մի շարք դեպքեր: Հանձնարարվել է ակտերը համապատասխանացնել գործող օրենսդրության կանոններին և վերահսկվել է գործառույթի կատարման ընթացքը:

Ընդունած որոշումների մեջ մեծ թիվ են կազմում սոցիալական բնագավառներին առնչվող որոշումները:

2014 թվականին հսկողություն է սահմանվել նաև մարզպետների ընդունած գերատեսչական իրավական ակտերը մարզպետարանների ինտերնետային կայք-էջերում պարտադիր տեղադրելու ուղղությամբ:

1.10 Ավագանու որոշումների նկատմամբ մարզպետարանների կողմից իրականացված իրավական հսկողություն

2014 թվականին ամփոփվել և նախարարության ինտերնետային կայք-էջում տեղադրվել են նաև համայնքի ավագանու որոշումների նկատմամբ մարզպետարանների կողմից իրականացված իրավական հսկողության արդյունքները:

2014 թվականին համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել թվով 24736 որոշում, որից ոչ իրավաչափ է համարվել թվով 1199 իրավական ակտ, որի տեսակարար կշիռը կազմում է 4.8 %:

1.11 Մարզպետների գործունեության գնահատում

2014 թվականին ՀՀ կառավարության 09.05.2009 թվականի թիվ 562-Ն որոշմամբ նախատեսված ընթացակարգին համապատասխան՝ գործադիր իշխանության հանրապետական համապատասխան մարմիններից, ինչպես նաև նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներից հավաքագրվել են մարզպետների 2013 թվականի գործունեության արդյունքների գնահատականները, որոնք այնուհետև ամփոփվել և սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Գործընթացի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով 2013թ. ՀՀ կառավարության թիվ 562-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացում, որի արդյունքում ավելացել են վարչական հսկողության իրականացման համար նախատեսված գնահատման միավորները: Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխություն է կատարվել նաև ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. դեկտեմբերի 20-ի թիվ 07-Ն հրամանում, որը ստացել է պետական գրանցում:

1.12 Մարզխորհրդի նիստեր

Մարզի արդյունավետ կառավարման և զարգացման գործընթացում մարզխորհուրդների դերակատարումը բարձրացնելու նպատակով նախարարության կողմից հաշվետու ժամանակահատվածում լրացում է իրականացվել «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրում՝ ավելացվելով նոր գլուխ՝ վերջիններիս գործառույթների նկարագրման վերաբերյալ:

Իրականացված լրացումների արդյունքում վերապահվել է վերջինիս կողմից ուղերձներ ընդունելու իրավասություն, սահմանվել են մարզխորհրդի նիստերի անցկացման հաճախականությունը, թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ընդլայնվել են մարզխորհրդի նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի շրջանակները, մասնավորապես՝ նախատեսելով պարտադիր քննարկման առարկա դարձնել մարզի կարճաժամկետ և երկարաժամկետ բյուջետային հայտերը, մարզի զարգացման ծրագրերը և այլն:

Միաժամանակ նախարարության աշխատակիցները պարտադիր կարգով մասնակցել են բոլոր նիստերին և արդյունքների վերաբերյալ ներկայացրել են զեկուցագրեր:

2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1 Համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման բարելավման և կատարելագործման առումով 2014թ. իրականացված միջոցառումներ

Տարեսկզբին իրականացվել է 2014թ. համայնքային բյուջեների եկամուտների պլանային ցուցանիշների (մասնավորապես գույքահարկի, հողի հարկի, տեղական ու պետական տուրքերի և գույքի վարձակալությունից ստացված եկամուտների) մանրակրկիտ վերլուծություն, որի արդյունքում բազմաթիվ (մոտ 400) համայնքներում ավագանիների կողմից վերանայվել են իրենց բյուջեները և հաստատվել ավելի իրատեսական բյուջեներ: Ինչպես 2014թ., այնպես էլ 2015թ. համայնքների բյուջեները օրենսդրությամբ սահմանված ժամկետում հաստատվել են:

Իրականացվել է պարբերական մոնիթորինգ համայնքների կողմից կուտակած աշխատավարձի գծով պարտքերի մարման գործընթացի նկատմամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվել նաև ընթացիկ աշխատավարձերի ժամանակին վճարման, լրացուցիչ պարտքեր չկուտակելու վրա:

Աշխատավարձերի նախկին տարիների կուտակած պարտքերի մարման մասով արձանագրվել է հետևյալ արդյունքը. 2008թ. հունվարի 1-ի դրությամբ ձևակերպված շուրջ 2.3 մլրդ դրամ պարտքերից 2014թ. դեկտեմբերի 31 -ի դրությամբ առկա է մոտ 36.3 մլն դրամ պարտք, սակայն 2013թ. ընթացքում Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում կուտակվել է շուրջ 32.4 մլն դրամի պարտք (ընդամենը պարտքը կազմում է 68.7 մլն դրամ): 2014թ. ընթացքում պարտքի մարում է կատարվել 9,9 մլն դրամի չափով: Դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի մնացորդը կազմում է 58.8 մլն դրամ:



✓ 2014թ. ընթացքում բոլոր մարզերում՝ թվով 320 համայնքներում, իրականացվել են ուսումնասիրություններ բյուջեների կազմման, հողի հարկի և գույքահարկի բազաների վարման, հարկատուների հետ տարվող աշխատանքների գործընթացների ուսումնասիրման նպատակով:

- Արձանագրվել է, որ դեռ ոչ բոլոր համայնքներ են ընդունում իրատեսական բյուջեներ՝ դրանք լինում են կամ ավելի կամ պակաս համայնքի բազային ցուցանիշից: Հաշվի առնելով 2008 թվականից հետո գոյացած հողի հարկի և գույքահարկի ապառքները, համայնքները կարողանում են հարկատուների 46.2% հաշվին կատարել իրենց տարեկան պլանային ցուցանիշները և անհրաժեշտ աշխատանքներ չեն տանում չվճարող հարկատուների հետ:
- Հողի հարկի և գույքահարկի բազաներում դեռ առկա են բազմաթիվ անճշտություններ, որոնք տարբեր պատճառներով համայնքները ուղղումներ չեն կատարել: Հիմնական պատճառներից է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկությունների անճշտությունը և անհամապատասխանությունն իրականությանը:

2.2 Համայնքային բյուջեների եկամուտների ցուցանիշներ

2014թ. ՀՀ համայնքների բյուջեների փաստացի մուտքերը նախատեսված 115.34 մլրդ դրամի դիմաց կազմել են 113.98 մլրդ դրամ, (կատարողականը՝ 98,8%): 2013 թվականի համեմատությամբ ընդամենը եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 7.9 %-ով կամ 8.34 մլրդ դրամով:

Սեփական եկամուտները կազմել են ընդամենը եկամուտների 29.2 %-ը: Սեփական եկամուտները նախատեսված 33.80 մլրդ դրամի դիմաց փաստացի կազմել են 33.24 մլրդ դրամ (կատարողականը՝ 98.4%): 2013 թվականի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը աճել է 10.2 %-ով կամ 3.08 մլրդ դրամով:

Հողի հարկի հավաքագրումը կատարվել է 93.5 %-ով: Նախատեսված 4.38 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4.1 մլրդ դրամ: 2013 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը նվազել է 1.4.%-ով կամ 60,27 մլն դրամով:

Գույքահարկի հավաքագրումը կատարվել է 102.8 %-ով: Նախատեսված 14.11 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 14.50 մլրդ դրամ: 2013 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 13.6 %-ով կամ 1.73 մլրդ դրամով:

Տեղական տուրքերի հավաքագրումը կատարվել է 92.9 %-ով: Նախատեսված 4.19 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3.89 մլրդ դրամ: 2013 թվականի համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 14.7 %-ով կամ 500,3 մլն դրամով:

Պետական տուրքերի հավաքագրումը կատարվել է 104,9 %-ով: Նախատեսված 721.2 մլն դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 756.4 մլն դրամ: 2013թ. համեմատությամբ պետական տուրքերի հավաքագրման ցուցանիշը աճել է 7.7 %-ով, կամ 54.3 մլն դրամով:

Գույքի վարձակալությունից եկամուտների հավաքագրումը կատարվել է 96.5%-ով: Նախատեսված 3.46 մլրդ դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3.34 մլրդ դրամ: 2013թ. համեմատությամբ հավաքագրման ցուցանիշը աճել է 9.1 %-ով կամ 279.9 մլն դրամով:


Ընդամենը եկամուտներ
Սեփական եկամուտներ
40,692,660
/3,477,562/
44,170,222
/8,430,157/
52,600,379
/31,232,316/
83,832,695
/3,660,620/
87,493,315
/7,930,127/
95,423,442
/10,317,016/
105,640,458
/8,344,610/
113,985,069
17,342,862
/1,194,385/
18,537,247
/ 3,150,130 /
21,687,377
/2,140,111/
23,827,488
1,169,823/
24,997,311
/3,401,635 /
28,398,946
/1,860,116 /
30,159,062
/3,082,443/
33,241,506
2007թ.
2008թ.
2009թ.
2010թ.
2011թ.
2012թ.
2013թ
2014թ.


Սեփական եկամուտներ
Հարկային եկամուտներ
(հողի հարկ +գույքահարկ)
17,342,862
/1,194,385/
18,537,247
/3,150,130/
21,687,377
/2,140,111/
23,827,488
1,169,823/
24,997,311
/3,401,635/
28,398,946
/1,760,116/
30,159,062
/3,082,443/
33,241,506
Տուրքեր (պետական տուրքեր + տեղական տուրքեր)
10,744,373
1,194,385/
11,628,014
/3,588,503/
15,216,517
/625,535/
15,842,052
/385,686/
16,227,738
/71,991/
16,299,729
/626,455/
16,926,184
/1,673,415/
18,599,599
Գույքի վարձակալությունից եկամուտներ
2,060,147
1,922,646
2,218,551
1,917,669
2,343,531
1,905,852
3,078,113
2,150,234
3,335,395
2,563,687
3,736,098
3,055,272
4,094,504
3,062,588
4,649,103
3,342.455
2007թ.
2008թ.
2009թ.
2010թ.
2011թ.
2012թ.
2013թ.
2014թ.

2.3. Համայնքների բյուջեներին պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացում

✓ Համայնքների բյուջեներին պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով փոփոխություններ են արվել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում:
✓ 2014 թվականին ՀՀ կառավարության կողմից փոխհատուցվեցին նվազագույն աշխատավարձի շեմի և էլեկտրաէնեգիայի սակագների բարձրացմամբ պայմանավորված համայնքների լրացուցիչ ծախսերը: Դրանց փոխհատուցումը նախատեսված է նաև 2015 թվականին:
✓ Բացի այդ ՀՀ կառավարությունը (31.07.2014թ. N792-Ն որոշում) փոխհատուցեց ՀՀ համայնքային բյուջետային հիմնարկներում և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված լրացուցիչ ծախսերը:

2.4. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացում

✓ 2013 թվականի մարտի 21-ին ՀՀ կառավարությունը թիվ N271-Ն որոշմամբ հաստատվել է Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց և ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը, որի նպատակն է՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացվող՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և տվյալ տարվան նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում հակառակորդի կողմից գնդակոծման դեպքեր արձանագրված հողատարածքներ ունեցող սահմանամերձ համայնքների (այսուհետ՝ ծրագրում ընդգրկված համայնքներ) հողի հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելը, որի արդյունքում առավել նպաստավոր պայմաններ կստեղծվեն նշված համայնքների բնակիչների համար, ինչը կնպաստի սահմանամերձ համայնքների հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսություն-ների եկամուտների ավելացմանը.

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների պաշտպանունակության բարձրացումը և դրանց սոցիալ-տնտեսական զարգացումը, ծրագրում ընդգրկված համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմքերի ստեղծումը, համալիր միջոցառումների իրականացման միջոցով դրանց ամրապնդումն ու կայուն զարգացման ապահովումը:

✓ Ծրագիրը շարունակական է՝ ՀՀ կառավարությունը 2014 թվականի մարտի 27-ին ընդունել է N338-Ա որոշումը /անուհետև ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ծրագրի համայնքների ցանկում ավելացվեցին Վերին կարմիր աղբյուր և Այգեհովիտ համայնքները/, որով սահմանվեցին սահմանամերձ համայնքների 2014 թվականի համար հատկացվող փոխհատուցման գումարները:

✓ Հայաստանի Հանրապետության մարզերում 2014 թվականի գարնանը ցրտահարության հետևանքով մարզերի համայնքների հողի հարկ և հողի վարձակալության վճար վճարող, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված այդ համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2014 թվականի ապրիլի 10-ին ՀՀ կառավարությունը թիվ N532-Ն որոշմամբ հատկացրել է ֆինանսական միջոցներ, որի նպատակն է առավել նպաստավոր պայմաններ ստեղծել համայնքների վնասված հողերի հետագա արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացման համար:

2.5. Համայնքների համար գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական միասնական բանկի ստեղծում

Պայմանավորված «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների փաթեթի ընդունմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ իրականացնելու ՀՀ համայնքների կողմից վարվող հողի հարկի և գույքահարկի շտեմարաններում (բազաներում), ինչպես նաև միասնական տեղեկատվական համակարգում:

«Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից մշակվել էին վերը նշված օրենքների փոփոխությունների հետ կապված ծրագրային փոփոխությունների 1-ին փուլը և այդ փոփոխությունները 2014 թվականին տեղայնացվեցին թվով 570 հաշվառող մարմիններում: (Համապատասխան ընդունման-հանձնման արձանագրությունները առկա են:)

Որպես հետևանք՝ համապատասխան փոփոխությունների անհրաժեշտություն առաջացավ նաև մարզային և կենտրոնական տեղեկատվական միասնական շտեմարաններում: Այդ փոփոխությունները «Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից նույնպես կատարվել են և տեղայնացվել մարզկենտրոններում և ՏԿՆԱԻՆ –ում:

Ծրագրային փոփոխությունների 2-րդ փուլը «Վեկտոր Պլյուս» կազմակերպության կողմից նույնպես մշակվել է, սակայն տեղայնացումը չի կատարվել, քանի որ «Անշարժ գույքի հարկի մասին» և «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքների օրենքների ընդունումը, որը նախատեսված էր 2014 թվականին, ՀՀ Ազգային Ժողովի կողմից տեղի չի ունեցել:

2.6. Համայնքի զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության մշակում

2013 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, համաձայն որի՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը մշակում և համայնքների ղեկավարներին է ներկայացնում համայնքի քառամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը: Այն մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության, Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրերի շրջանակներում՝ «Հայաստանի ֆինանսիստների միավորում» ՀԿ փորձագետների հետ համատեղ:

Այն արդեն իսկ տրամադրվել է ՀՀ մարզպետարաններին և համայնքներին:

2.7. Վարչատարածքային բարեփոխումների իրականացում, համայնքների խոշորացմանն ուղղված քայլերի իրականացում

2014 թվականի ընթացքում համայնքների խոշորացման գործընթացն ընթացել է մի քանի ուղղություններով.

- համայնքների խոշորացման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակման նախապատրաստում. 2014 թվականի ընթացքում մշակվել է համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծային փաթեթը, որում ներառված են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք քննարկվել են նաև Եվրոպայի Խորհրդի փորձագետների հետ.

- գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացում՝ տարատեսակ պարզաբանումների տրամադրում (համայնքների բնակիչների, մարզային և համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում խոշորացվող համայնքներում, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում, հեռուստատեսությամբ, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով հարցազրույցների կազմակերպում և այլն)՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով Հայաստանում գրանցված միջազգային կազմակերպությունների հետ:

Մասնավորապես.

- ս.թ. մարտի 5-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կայացել է «Հայաստանի Հանրապետության համայնքների խոշորացման գործընթաց» թեմայով քննարկումը, որին մասնակցել են ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ հանրային խորհրդի, տեղական հասարակական և միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները: Քննարկումների ընթացքում հնչեցված հարցերի և կատարված առաջարկությունների արդյունքում մշակվել են երկու հարցաշարեր՝ նախատեսված հասարակական կազմակերպությունների և լայն շրջանակների, ինչպես նաև փորձագիտական և մասնագիտական շրջանակների համար: Հարցաշարերը զետեղվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայք-էջում:
- Նախարարության պաշտոնյաների կողմից կատարվել են այցեր՝ ՀՀ Սյունիքի (Տաթևի և Մեղրու համայնքային փնջերի պիլոտային ծրագրերի քննարկում), ՀՀ Վայոց ձորի (Զառիթափի և Ջերմուկի համայնքային փնջեր), ՀՀ Տավուշի (Դիլիջանի համայնքային փունջ) և ՀՀ Լոռու (Թումանյանի համայնքային փունջ) մարզեր, որտեղ վերջիններս հանդիպել են մարզային և համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, քննարկել համայնքների խոշորացմանն առնչվող առավել խնդրահարույց հարցեր:
- «Counterpart International» ԱՄՆ ՄԶԳ կողմից կազմակերպվել են Վեդու և Դիլիջանի համայնքների երիտասարդական խմբերի (ավագանու անդամներ, համայնքային ծառայողներ) համար նախատեսված թեմատիկ քննարկումներ:
- «Տնտեսական լրագրողների ակումբ» ՀԿ-ի կողմից Գյումրու, Վանաձորի, Արմավիրի, Մարտունու քաղաքային համայնքների տեղական լրագրողների համար կազմակերպվել են լսումներ՝ համայնքների խոշորացման թեմայով:
- Ս.թ. մարտ ամսին Գերմանական միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ կազմակերպված, փորձի փոխանակման նպատակով Վրաստանի Հանրապետություն կատարված այցելության ընթացքում ուսումնասիրվել են Վրաստանի օրենսդրությունը (տեղական ինքնակառավարման և ընտրական ոլորտները), ինչպես նաև այնտեղ իրականացված վարչատարածքային բարեփոխումների մոդելը:
- Մայիսի 17-18-ը Աղվերանի համալիրում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) "Համայնքների զարգացում Հարավային Կովկասում" ծրագրի աջակցությամբ կազմակերպվել են թեմատիկ քննարկումներ շուրջ 25 լրատվամիջոցների ներկայացուցիչների համար՝ Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների գործընթացի մասին իրազեկելու նպատակով:
- «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը մշակվել և ուղարկվել են Եվրոպայի Խորհրդի փորձագետներին: Ս.թ. հոկտեմբերի 1-ին տեղի է ունեցել վերջիններիս մասնակցությամբ իրենց կողմից արված առաջարկությունների քննարկում:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում մեր կողմից փորձ է արվել ներդնել բոլորովին նոր՝ բնակավայրի ընդհանուր ժողովի և համայնքի ղեկավարի վարչական ներկայացուցչի ինստիտուտներ: Այդ հայեցակարգային փոփոխությունների նպատակում դրված է խոշորացված համայնքի կազմում գտնվող բնակավայրերի բնակիչների մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև տեղական ինքնակառավարումը բնակչությունից չհեռացնելու գաղափարը: Բացի այդ, համայնքի ավագանու կազմում յուրաքանչյուր բնակավայրից առնվազն մեկական ավագանու անդամ ներկայացված լինելու նպատակով առաջարկվել է յուրաքանչյուր բնակավայրում ձևավորել նաև միամանդատ մեծամասնական ընտրատարածք:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համայնքների խոշորացման գործընթացի մեկնարկի համար անհրաժեշտ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ Ազգային

Ժողովի կողմից ընդունելու, ինչպես նաև խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեներ նախապատրաստելու և անցկացնելու համար կպահանջվի ներկայացվող օրենքների լրամշակման համար որոշակի ժամանակ. նախագծային փաթեթը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելիս առաջարկվել է ներկայացվող նախագծերը քննարկել նախարարական կոմիտեի նիստում և առայժմ ձեռնպահ մնալ այն ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելուց:

Ներկայումս նախագծային փաթեթը վերադարձվել է և գտնվում է լրամշակման փուլում:

2.8. Տեղական ինքակառավարման բնագավառի զարգացմանն ուղղված միջազգային համագործակցություն

2014 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝

1) GIZ (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում ծրագրի ամփոփ հաշվետվություն» ծրագիր:
   Ծրագրի նպատակն է՝
   հզորացնել տեղական ինքնակառավաման համակարգը և պատշաճ տեղական ինքնակառավարումը Հարավային Կովկասում:
   Ծրագրի բաղադրիչները՝
   ա) տարածքային բարեփոխումներ բաղադրիչ,
   բ) էլ. կառավարման համակարգ բաղադրիչ,
   գ) համայնքային բյուջետավարում բաղադրիչ,
   դ) տարածքային կառավարում բաղադրիչ:
2) GIZ (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) «Կենսաբազմազանության կայուն կառավարում, Հարավային Կովկաս» ծրագիր:
   Ծրագրի ընդհանուր նպատակը սահմանում է. «Հարավային Կովկասում տեղական, ազգային և տարածաշրջանի մակարդակներում կենսաբազմազանության կայուն կառավարում հասկացության, որպես ռեսուրսների պահպանության միջոց, առավել խորը ինտեգրումը պետության, տնտեսության և հասարակության մեջ և իրականացումը որպես մոդել»:
   Ծրագրի երկրորդ փուլը ներառում է հետևյալ 4 բաղադրիչները՝
   բաղադրիչ 1՝ Կենսաբազմազանության ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր,
   բաղադրիչ 2՝ Անտառների կայուն կառավարում,
   բաղադրիչ 3՝ Կայուն գյուղատնտեսություն և վայրի հավաք,
   բաղադրիչ 4՝ Կենսաբազմազանության պահպանման ոլորտում տարածաշրջանային փոխանակում:
3) GIZ (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիր:
   Ծրագիրը նպատակ ունի հաղթահարելու հողերի էրոզիան և դեգրադացիան՝ պահպանելով կենսաբազմազանությունը: Որպես ծրագրի արդյունքներ՝ մատնանշվել են հետևյալ փուլերը.
   ա. նկարագրել էրոզիայի ռիսկերը և արոտների վիճակը,
   բ. մշակել և իրականացնել հողերի էրոզիայի վերահսկողության ինտեգրացված միջոցառումներ ընտրված պիլոտային տարածքներում,
   գ. էրոզիայի վերահսկողության միջոցառումների իրականացման համար ստեղծել խթաններ և մոտիվացիոն մեխանիզմներ համայնքների համար,
   դ. ստեղծել համապատասխան մեխանիզմներ փոխանակման և ուսումնական ծրագրերի իրականացման համար:
4) USA AID (ԱՄՆ միջազգային զարգացման գրասենյակ) «Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագիր»:
   Ծրագրի բաղադրիչներից մեկը, որը վերաբերում է տեղական ինքնակառավարման կարողությունների ընդլայնմանը, ենթադրում է հետևյալ գործողությունների իրականացումը՝
   - խոշորացման, միջհամայնքային համագործակցության կամ նման այլ մոտեցումների վերաբերյալ հստակ քաղաքականության մշակում համայնքի իրավունքների, պարտականությունների, լիազորությունների և ֆինանսավորման սահմանման համար,
   - տեղական ինքնակառավարման մարմինների մասին նոր օրենքի ներկայացում,

- համահարթեցման մասին օրենքի ընդունման խթանում,
- գույքի նկատմամբ տեղական հարկի մասին օրենքի ներկայացում,
- պետական բյուջեի միջոցներից համայնքային վարկավորման մեխանիզմների ներդնում,
- տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման համար համայնքային ծառայության բարեփոխումների ներմուծում,
- տեղական ինքնակառավարման մարմինների համար գնումների վերաբերյալ կանոնակարգերի բարելավում:

5) Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն «Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում» ծրագրի վերաբերյալ համաձայնագիրը կնքվել է 2014 թվականի հունիսի 27-ին:
Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի հաշվետվողականության, արդյունավետության և աշխատունակության ուժեղացմանը:
6) UNDP (Միավորված ազգերի զարգացման ծրագիր) «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանումը Հայաստանում». Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում:
Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության ամրապնդմանը, իրավահավասար ժողովրդավարության կառուցմանն ու հասարակության համախմբվածության խթանմանը՝ նպաստելով տեղական մակարդակում մարդու իրավունքների իրականացմանը և ժաղովրդավարական կառավարման զարգացմանը: Ծրագիրը նաև նպատակ ունի ստեղծելու բարենպաստ միջավայր կանանց ավելի ակտիվ և նպատակային ներգրավմանը հանրային կառավարման և քաղաքականության մշակման գործընթացներում՝ լիովին գործադրելով իրենց կարողությունները և ներուժը:
7) Դանիայի կառավարության աջակցությամբ 2014 թվականի փետրվարին մեկնարկել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը. աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին, տեղական իշխանությունների կարողությունների զարգացում, տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում» ծրագիր:
Ծրագիրը նպատակ է հետապնդում տրամադրելու Եվրոպայի խորհրդի իրավական փորձագիտական կարծիքը, քաղաքական խորհրդատվությունը և աջակցությունը տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացին՝ այդ թվում՝ վարչատարածքային բարեփոխումների նախապատրաստմանը, ինչպես նաև զարգացնելու տեղական իշխանությունների կարողությունները: Առաջին բաղադրիչը (Աջակցություն տեղական ինքնակառավարման բարեփոխումներին) նպատակ ունի ՏԻՄ ոլորտի հայաստանյան օրենսդրությունը ներդաշնակեցնելու եվրոպական ստանդարտներին: Երկրորդ բաղադրիչն (Տեղական իշխանությունների կարողությունների զարգացում) ուղղված է տեղական իշխանությունների ինստիտուցիոնալ կարողություններին և ծառայությունների մատուցման հնարավորություններին: Եվ երրորդ բաղադրիչը (Տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդության հզորացում) նպատակ ունի բարելավելու տեղական ընտրված ներկայացուցիչների առաջնորդության և կառավարման կարողությունները և համագործակցության ոգի ձևավորելու ՏԻՄ-երի միջև:
8) UNICEF (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) ՀՀ Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, և Շիրակի մարզերում համայնքային ենթածրագրերի ֆինանսավորման և իրականացման մասին փոխըմբռնման հուշագիր:
Հուշագրի նպատակն է սահմանել կողմերի դերերը և պարտականությունները համայնքային ենթածրագրերի իրականացման ընթացքում, որոնք կազմում են Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, և Շիրակի մարզերում մշակված տարածքային սոցիալական ծրագրերի մի մասը:
9) KFW (Գերմանական զարգացման բանկ) «Վանաձոր քաղաքի Կոշտ Կենցաղային Թափոնների Համակողմանի Կառավարման համակարգի մշակման իրագործելիության հետազոտություն» ծրագիր:
Պայմանագրով ամրագրված է, որ Խորհրդատուի կողմից մատուցված ծառայությունների արդյունքում նրան KfW պետք է վճարի 399.00.00 Եվրո:
10.01.2014թ ստացվել է «Տարբերակների գնահատման հաշվետվությունը», որում ներառված է ամբողջ Լոռու մարզը և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը և այն 20.01.2014թ. ՀՀ ՏԿՆ գրությամբ ներկայացվել է շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանը:
10) ADB (Ասիական զարգացման բանկ) կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) ոլորտում ներդրումային դրամաշնորհային ծրագիր:

Համաձայն ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի եզրակացության՝ նախապատրաստական տեխնիկական օժանդակության գործող ծրագիրը բաժանվել է երկու փուլերի.

ա. առաջին փուլով մշակվում է ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը, իրականացման ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային ծրագիրը,

բ. Ե րկրորդ փուլի շրջանակներում կիրականացվի նախատեսվող ներդրումային փաթեթի իրագործելիության «դասական» ուսումնասիրություն (Գյումրի քաղաքը և հարակից տարածքները սպասարկող տարածաշրջանային աղբավայրի համար իրագործելիության ուսումնասիրություն):

11) ՀՀ կառավարության խնդրանքով Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Հայաստանին տրամադրում է քաղաքականության մշակման և խորհրդատվական տեխնիկական աջակցություն (ՏԱ)՝ մշակելու քաղաքային զարգացման/ներդրումային պլաններ (ՔԶՆՊ) չորս (երկրորդային/secondary) քաղաքներում՝ Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում և Ջերմուկում:
Բանկը ՀՀ կառավարության քննարկմանն արդեն ներկայացրել է Դիլիջանի և Գյումրու քաղաքային զարգացման պլանները:

12) EBRD (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ) Կոտայքի կոշտ թափոնների ծրագիր:
Ծրագրի նպատակն է՝ կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան տարածաշրջանային աղբավայր Հրազդանում՝ ՀՀ Կոտայքի 7 և ՀՀ Գեղարքունիքի Սևանի քաղաքային համայնքների վարչական տարածքների համար:
ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նշանակվել է վարկային ծրագրի 2-րդ փուլի միջոցառումների կազմակերպման նպատակով ծրագրի պատասխանատու:

2.9. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում համայնքներում

2014 թվականի ընթացքում Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) ներդրվել է ևս 80 համայնքներում: Ընդհանուր առմամբ տեղեկատվական համակարգը ներկայումս շահագործվում է ՀՀ 586 համայնքներում: Տարվա ընթացքում թվով 150 ՏԻՄ-երում աշխատանքներ են տարվել էլեկտրոնային փաստաթղթաշարժի ներդրման ուղղությամբ, որոնց արդյունքում բոլոր 48 քաղաքապետարաններում և շուրջ 455 գյուղապետարաններում (ընդհանուր թվով ավելի քան 503 համայնքներում) շահագործվող ՀԿՏՀ–ներն իրենց փաստաթղթաշարժի բաղադրիչի միջոցով հնարավորություն ունեն էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակելու պետական կառավարման մարմիններում շահագործվող փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի հետ: Տարվա ընթացքում 90 համայնքներում գործարկվել են համացանցային պաշտոնական կայքեր, իսկ նման կայքեր շահագործող համայնքների թիվը 240-ն է:

ՀՀ բոլոր համայնքները ներառվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից շահագործվող պաշտոնական էլեկտրոնային փոստի ծառայության՝ @mta.gov.am դոմենային տիրույթում, ինչի արդյունքում բոլոր քաղաքապետարանները և գյուղապետարաններն ունեն էլեկտրոնային փոստի միասնական սկզբունքների վրա ձևավորված հասցեներ:

2.10. Այլ միջոցառումներ

- Համայնքների վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին հավանություն տալու վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծեր (թվով 5)՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման ծրագրերի իրականացում՝ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098-Ն որոշման համապատասխան:

- Թվով 205 հողաշինարարական գործ ներկայացվել է «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» քննարկմանը, որից ՝

133-ը ստացել է դրական եզրակացություն,

21-ը ներկայումս քննարկվում է շահագրգիռ գերատեսչությունների հետ,

3-ը գտնվում է մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական կոմիտեում:

- ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 16-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման վերաբերյալ.

թվով 20 հողաշինարարական գործեր ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարի համաձայնեցմանը, որոնցից ՝

17-ի վերաբերյալ տրվել են դրական եզրակացություններ,

3-ը՝ լիազոր գերատեսչությունների հետ համաձայնեցման փուլում են:

- Տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրություններ նշանակելու և ֆինանսավորելու վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծեր (թվով 15)՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովում:

Ս.թ. նոյեմբերի 7-8-ին Ջերմուկ քաղաքում անց է կացվել գյուղական համայնքների 4-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցել են պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ մասնակցում էր մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված են եղել թվով տասը համայնքապետեր, մարզում համայնքի կին ղեկավարներ և ավագանու հինգ անդամներ:

Համաժողովի ընթացքում կազմակերպվեցին բանախոսություններ և քննարկումներ՝ հետևյալ 7 թեմատիկ աշխատանքային խմբերում՝

Թեմա 1.1 «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, դրա սկզբունքները և կիրառելիությունը:

1.2. Նվազագույն աշխատավարձով պայմանավորված համայնքային ծառայողների և համայնքային աշխատողների դրույքաչափերի սահմանումից և բյուջետային պլանավորումից բխող խնդիրները, համայնքներում բյուջետավարման մեթոդաբանության ներկայացում:

1.3. Տեղական հանրաքվե, օրենսդրական վերլուծություններ, նոր օրենսդրական նախագծի հայեցակարգային մոտեցումները:

Թեմա 2. Տեղական ինքնակառավարման ոլորտ: Տեղական ինքնակառավարման համակարգի և ավագանու կարողությունների ու ինստիտուտի հետագա զարգացման միտումները:

Թեմա 3. Տեղական ինքնակառավարում, ՏԻ մարմինների լիազորություններն ու գործունեությունը և դրանց նկատմամբ իրականացվող ստուգումները: Համայնքներում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը:

3.1 Տեղական հարկերի (հողի հարկի և գույքահարկի) շտեմարանների հետ տարվող աշխատանքներ (գույքահարկի և հողի հարկի միասնական տեղեկատվական համակարգի կազմավորում):

3.2 Տեղեկատվական համակարգերի զարգացումը համայնքներում, վերջին տարիներին իրականացված միջոցառումները և ձեռքբերումները (քաղաքացիների սպասարկման կենտրոններ, համայնքների կայքեր և այլն):

3.3 ՀՀ մարզպետարանների կողմից կիրառվող վարչական հսկողության ընթացակարգերի արդյունքում առաջացած խնդիրների վերաբերյալ:

Թեմա 4. Շրջակա միջավայր և բնապահպանական հիմնախնդիրներ:

4.1 Կենսաբազմազանության կայուն կառավարումը Հարավային Կովկասում:

- Անտառների և արոտավայրերի տեղեկատվության կառավարման համակարգի ներկայացում:

4.2 «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիր:

- անտառպատման և անտառտնկման հնարավորությունների և արոտների գերարածեցման և դեգրադացիայի խնդիրների ուսումնասիրություն:

4.3 Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ռազմավարական պլանը, դրա իրականացման ճանապարհային քարտեզը, ներդրումային պլանը և բնապահպանական հիմնախնդիրները:

Թեմա 5. Գյուղացիական տնտեսությունների ձևավորում, կոոպերատիվների հիմնում, գյուղատնտեսության զարգացման արդի տենդենցները, ոլորտում իրականացվող նորարարությունները, հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավորությունները:

5.1. Համայնքներում առկա կոոպերատիվների և ասոցիացիաների հետ համագործակցության հնարավորություններ և նոր հաստատությունների հիմնում:

5.2. Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ գյուղի զարգացմանը, գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական նորարությունների ներմուծմանը, գյուղատնտեսական հմտությունների ձևավորմանն ուղղված ծրարգերի իրականացման վերաբերյալ:

Թեմա 6. Զբոսաշրջություն: Տարածքային համաչափ զարգացում: Գյուղ-քաղաք կապի կառավարում, գյուղը որպես սոցիալ-տնտեսական բջիջ, զարգացումը և հիմնախնդիրները, գյուղական երիտասարդության հիմնախնդիրները, կենսամակարդակի բարձրացում:

6.1 Գյուղի զարգացման ծրագրեր, ծրագրային մոդելներ – «Տաթևի վերածնունդ» ծրագիր, «Օձունի գանձերը» փառատոն, «Արենի Գինու փառատոն», Նոր Արփենի «Հայկական Տարազների փառատոն» և այլն:

Թեմա 7. Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում.

7.1 «Մասնակցային գործընթացները որպես սոցիալական միասնության գրավական»:

7.2 Տեղական ինքնակառավարման համակարգում ներգրավված կանանց կարողությունների զարգացումը՝ որպես մասնակցային ժողովրդավարության խթանման և համայնքային կառավարման արդյունավետության բարձրացման գործոն:

Միջոցառումը նպատակ ուներ տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկման, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով աջակցելու գյուղական համայնքների կայուն զարգացմանը:

2 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

3.1. Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների գրանցամատյանի վարում

Նախարարության կողմից վարվում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյան, որում ներառված են համայնքներից, կարգով սահմանված ձևերին համապատասխան՝ 6156 անձանց վերաբերյալ ստացված տվյալները: Գրանցամատյանի տվյալների համաձայն՝ 2014թ.-ի դեկտեմբերի 16-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6664-ն են, որոնցից զբաղեցված են 6156–ը, կամ 92 %-ը: Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից կանայք կազմում են 52.7%-ը, տղամարդիկ՝ 47.3%-ը: Հաշվետու ժամանակահատվածում օրենքով նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում մինչև 1000 բնակչություն ունեցող համայնքներում աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերում բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի չափանիշները չներառելու մասին համաձայնություն է տրվել միայն 6 համայնքների: Ընդհանուր առմամբ, մինչև 1000 բնակչություն ունեցող 441 համայնքներից համաձայնություն է տրվել 285 համայնքներին:

3.2. Վերապատրաստման գործընթացի իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում հերթական վերապատրաստումն անցել է 2364 համայնքային ծառայող, որից 1976-ը՝ պետական բյուջեի, 388-ը՝ համայնքի բյուջեի (Երևանի քաղաքապետարանի թվով 388 համայնքային ծառայող) միջոցներով: Պետական բյուջեի միջոցներով վերապատրաստված 1976 համայնքային ծառայողներից 1240-ը վերապատրաստվել են ընդհանուր ծրագրով (72 ժամ), իսկ 736-ը՝ գնումների գործընթացների կազմակերպման աշխատանքներով զբաղվող համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրով (24 ժամ): 2010 թվականից ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նախաձեռնել է տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տարածքային կառավարման

մարմինների աշխատակիցների վերապատրաստումը, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009–2012 թթ. միջոցառումների ծրագրի մի շարք կետերի կատարման արդյունավետության բարձրացմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղական ինքնակառավարման մարմիններից վերապատրաստվել են ընդհանուր առմամբ 763 համայնքի ղեկավարներ և ավագանիների անդամներ, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների 75 աշխատակից:

3.3. Համայնքային ծառայողների ատեստավորման և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների անցկացման գործընթաց

Հաշվետու ժամանակահատվածում ատեստավորվել են թվով 1529 համայնքային ծառայողներ: Ատեստավորման արդյունքներով 13 համայնքային ծառայող ազատվել են զբաղեցրած պաշտոններից՝ այդ պաշտոններին չհամապատասխանելու հիմքով:

Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 1308 մրցույթներ, որոնցից կայացել են 1023-ը կամ շուրջ 78%-ը: Հրապարակայնությունն ապահովելու նպատակով մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Մրցույթների մասին տեղեկությունները տրամադրվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը:

3.4. Համայնքային ծառայության կադրերի ռեզերվ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել են 5 անձինք: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների կողմից կադրերի ռեզերվ 388 հարցում է կատարվել շուրջ 800 ժամանակավոր թափուր պաշտոններ ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրելու համար, որոնց մասին կազմված հայտարարությունները տեղադրվել են նախարարության հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում: Հարցում արված պաշտոններից 2-ի համար կադրերի ռեզերվից ներկայացվել են համապատասխան թեկնածուներ, որի արդյունքում նշված անձինք օրենքով սահմանված կարգով հանվել են կադրերի ռեզերվից՝ նրանց հետ համայնքային ծառայության պաշտոններում ժամկետային աշխատանքային պայմանագրեր կնքելու հիմքով:

3.5. Համայնքային ծառայողների նկատմամբ ծառայողական քննությունների անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում նշանակվել է թվով 1 ծառայողական քննություն ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի նկատմամբ:

Ծառայողական քննություններն իրականացվել են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Համայնքային ծառայողի ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատելու մասին» N 1003-Ն որոշմամբ հաստատված կարգով և սահմանված ժամկետներում, որոնց արդյունքներով ընդունվել են համապատասխան իրավական ակտեր:

Մինչ օրս նշանակվել է թվով 19 ծառայողական քննություն:

3.6. Կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության իրականացում

Համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով նախարարության կողմից «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.2-րդ հոդվածի համաձայն՝ կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն է իրականացվել

ՀՀ մարզերի թվով 80 քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում (յուրաքանչյուր մարզում՝ 8-ական համայնք):

Նախարարության կողմից համայնքներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ մարզպետներին ու համապատասխան համայնքների ղեկավարներին ներկայացվել են հայտնաբերված թերությունները և դրանց վերացման համար անհրաժեշտ առաջարկություններ: ՀՀ մարզպետներին տրվել են հանձնարարականներ՝ նշված թերությունները վերացնելու, ինչպես նաև մարզերի մյուս համայնքներում նմանատիպ թերությունները բացառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

Նախարարության ներկայացուցիչները մասնակցել են Երևանի քաղաքապետարանի թվով 326 համայնքային ծառայողների ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին՝ դրանով հանդերձ վերահսկողություն իրականացնելով համայնքային ծառայողների ատեստավորման գործընթացում օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ:

3 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

4.1 Եվրամիության Արևելյան գործընկերության երկրների տարածքային համագործակցության ծրագրերի մեկնարկին նվիրված միջազգային համաժողով

2014թ. հուլիսի 4-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Եվրամիության Արևելյան գործընկերության երկրների տարածքային համագործակցության ծրագրերի մեկնարկին նվիրված միջազգային համաժողովը, որին մասնակցեց ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի գլխավորած պատվիրակությունը. Արևելյան գործընկերության երկրների միջև ձևավորվել է տարածքային համագործակցության չորս ծրագիր՝ Հայաստանի և Վրաստանի, Բելառուսի և Ուկրաինայի, Մոլդովայի և Ուկրաինայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Ծրագրերի ռազմավարությունները մշակվել են Եվրահանձնաժողովի կողմից՝ գործընկեր երկրների հետ համատեղ:

Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի շահառուներն են Հայաստանի Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերը և Վրաստանի Քվեմո Քարթլիի ու Սամցխե Ջավախեթիի տարածաշրջանները: Ծրագրի նպատակը երկու երկրների սահմանակից տարածաշրջանների միջև կայուն փոխգործակցության զարգացումն է, տեղական իշխանությունների, համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև կապերի ամրապնդումը՝ սոցիալ-տնտեսական ընդհանուր խնդիրներին համատեղ լուծումներ գտնելու համար:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին ծրագրերի գերակայություններին, իրականացման մեխանիզմներին, ակնկալվող արդյունքներին առնչվող հարցեր: Գործընկեր երկրների պատվիրակությունները քննարկեցին համատեղ ծրագրերի ուղղությունները:

4.2 Հայաստան-ԱՄԷ միջկառավարական հանձնաժողովի գործունեության շրջանակներում Արաբական Միացյալ Էմիրություններից ժամանած գործարարների պատվիրակության այց Հայաստանի Հանրապետություն

2014թ. հունիսի 3-ին ՀՀ փոխվարչապետ, Հայաստան-ԱՄԷ միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ա. Գևորգյանն ընդունել է Արաբական Միացյալ Էմիրություններից ժամանած գործարարների պատվիրակությանը՝ Աբու Դաբիի Առտրի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև փոխգործակցության հնարավորությունները՝ հատկապես կարևորելով գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության,

զբոսաշրջության, շինարարության և շինանյութերի արտադրության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ոսկերչության, էներգետիկայի, քիմիական արդյունաբերության ոլորտները:

4.3 Հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի գործունեության շրջանակներում Հայաստան ժամանած եգիպտացի գործարարների պատվիրակության այց Հայաստանի Հանրապետություն

2014թ. հունիսի 2-ին ՀՀ փոխվարչապետ, հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ա. Գևորգյանն ընդունել է եգիպտացի գործարարների պատվիրակությանը՝ Կայուն զարգացման եգիպտական խորհրդի նախագահ և գործարար Մոթազ Ռասլանի գլխավորությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության տեսանկյունից հեռանկարային համարվող ոլորտները՝ հատկապես գյուղատնտեսության, զբոսաշրջության, տեղեկատվական տեխնոլոգիաների, վերամշակող արտադրության, ոսկերչության ուղղություններով:

4.4 Եվրամիության Արևելյան գործընկերության «Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն» հարթակի հանրային կառավարման աշխատանքային խմբի շրջանակում «Հանրային կառավարման բարեփոխումները տեղական և տարածքային մակարդակներում» խորագրով դասընթացների կազմակերպում Երևանում

Եվրամիության Արևելյան գործընկերության «Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն» հարթակի հանրային կառավարման աշխատանքային խմբի շրջանակում Երևանում անցկացվող «Հանրային կառավարման բարեփոխումները տեղական և տարածքային մակարդակներում» թեմայով դասընթացների մասնակիցները մայիսի 28-ին հյուրընկալվեցին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում:

Հյուրերը շրջայց կատարեցին նախարարությունում, ծանոթացան նախարարության գործառույթներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում իրականացվող քաղաքականությանը, նախատեսվող բարեփոխումներին, համայնքներում կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման նախաձեռնություններին: Նրանք հայ գործընկերներին ներկայացրին իրենց երկրի փորձը, կարծիքներ փոխանակվեցին հանրային կառավարման մոտեցումների վերաբերյալ:

4.5 2014-2015թթ. երկամյա աշխատանքային ծրագիր ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) միջև «2010-2015թթ. տարածքային սոցիալական պլանավորում» ծրագրի շրջանակում

2014թ. ապրիլի 8-ին «2010-2015թթ. տարածքային սոցիալական պլանավորում» ծրագրի շրջանակում ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) միջև ստորագրվել է 2014-2015թթ. երկամյա աշխատանքային ծրագիր: Փաստաթղթի նպատակը մարզերում երեխաների պաշտպանության գործընթացների ամրապնդումը, խոցելի երեխաների կարիքների բացահայտումը, սոցիալական ծրագրերի իրականացումն է: Այն մասնավորապես ենթադրում է չորս թիրախային մարզերի՝ Լոռիի, Տավուշի, Գեղարքունիքի և Շիրակի տարածքային սոցիալական պլանների շրջանակում մշակված 10 համայնքային սոցիալական ծրագրերի հաստատում և իրականացում, սոցիալական ոլորտի ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակման, ուղղորդման և համատեղ գործունեության վերաբերյալ ինստիտուցիոնալ համագործակցության հաստատում, տարածքային սոցիալական պլանների կանխատեսելի և բավարար ֆինանսավորման համար հայեցակարգային մոտեցումների մշակում, ArmeniaInfo-ի միջոցով համայնքների շտեմարանի առցանց կիրառմանն ուղղված տեխնիկական օժանդակություն:

5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2014թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ստացվել, մշակվել և «Mulberry» համակարգի միջոցով գրանցվել է 20121 մտից փաստաթուղթ, միաժամանակ ելից է եղել 8363 գրություն: 2014թ. ընթացքում ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի 2008թ. հրամանով հաստատված «ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգի» համաձայն՝ իրականացվել է 11 ընդունելություն, որին մասնակցել է 54 քաղաքացի:

6. ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

Հաշվետու տարում ՀՀ արխիվային գործի զարգացման 2014 թ. աշխատանքային ծրագրին համապատասխան՝ գործունեություն է ծավալվել ներքոնշյալ հիմնական ուղղություններով:

1. Արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով վերանորոգվել-վերականգնվել է 323.932 թերթ արխիվային փաստաթուղթ (ծրագիր՝ 308.238), կարվել-կազմապատվել՝ 26.510 գործ (ծրագիր՝ 22.577):

2. Հաշվետու տարում պատասխան է տրվել քաղաքացիներից և կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանից ստացված 147 թեմատիկ և սոցիալ-իրավական բնույթի 31.321 հարցումի, որը նախորդ տարվա համեմատ ավելի է մոտ 3000-ով:

3. Համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից արխիվային պահպանության է ընդունվել 20.806 գործավարական, 14.821 անձնակազմին վերաբերող և 1896 անձնական ծագում ունեցող գործ, անմշակ վիճակում՝ 141.400 թերթ ցրոն փաստաթուղթ: Համալրվել է նաև 5083 պահպանման միավոր կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, որից 533 կինո, 3888 ֆոտո և 662 ֆոնո փաստաթուղթ:

4. Շարունակվել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընթացը: «Հայաստանի ազգային արխիվ» ծրագրի համար թվայնացվել է 110 հազար պատկեր (էջ): Թվայնացվել է նաև 1763 կինոֆոտոֆոնո փաստաթուղթ:

5. Տարվա ընթացքում արխիվն ունեցել է 536 ուսումնասիրող:

6. 2014թ. լույս են տեսել փաստաթղթերի և նյութերի 4 ժողովածու, այդ թվում՝ «Հովսեփ Օրբելի», «Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920թթ.», Ստամբուլում՝ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ, 1915» փաստաթղթերի եռահատոր ժողովածուի հատընտիր մեկ հատորյակի թուրքերեն տարբերակը, Մոսկվայում՝ «Հայերը առաջին համաշխարհային պատերազմում (1914-1918թթ.)» ռուսերեն փաստաթղթերի և նյութերի ժողովածուն:

Հրատարակության է նախապատրաստվել «Բանբեր Հայաստանի արխիվների» 2014թ. համարը:

7. ՀԱԱ ցուցահանդեսներն ընդլայնել են իրենց աշխարհագրական սահմանները:

Կազմակերպվել են՝

. «Հայերը Մոսկվայում. պատմական ուղի» փաստաթղթերի և նյութերի ցուցահանդեսը,

. հայ ականավոր գիտնական, պետական և քաղաքական գործիչ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 85-ամյակին նվիրված ցուցադրություն,

. Առաջին համաշխարհային պատերազմի 100-ամյակին,

. Թիֆլիսի Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի 190-ամյակներին նվիրված ցուցահանդեսներ (առաջին ցուցադրությունը կայացել է Թբիլիսիում):

. ՀԱԱ-ն մասնակցել է նաև Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին նվիրված ցուցահանդեսի կազմակերպմանը:

8. Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել արխիվի 2-րդ և 3-րդ մասնաշենքերում և Աբովյանի տարածքային ներկայացուցչության զբաղեցրած տարածքում:

9. 2014թ. պետբյուջեից ստացվել է 459,6 միլիոն դրամ սուբսիդիա, 19,5 միլիոն դրամ դրամաշնորհ: Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հասույթը կազմել է մոտ 100 միլիոն դրամ: